Հարցերիս խուսափողական պատասխաններ են տալիս։ Վանեցիներ։ Մէկը գնում է դատաւորի պաշտօն ստանձնելու, միւսը բոլշեւիկեան թերթի խմբագիր էր Պոլսում, դատական կոմիսարիութեան մէջ դեր պիտի խաղայ։

Մի ամերիկացի հայ։ Տասնվեց տարի է Իգդիրից հեռացել է, չարքաշ կեանք է վարել, ուսում առել եւ, հիմա ասում է, չգիտեմ ո՞ր քաղաքում, պրոֆեսոր է։ Գնում է Հայաստան հին կօշիկներ ծախելու։ Ոգեւորուած պատմում է, որ մեծ քանակութեամբ գնել է եւ, իր հաշուով, 25,000 տոլար պիտի վաստակի։ Չի թաքցնում, որ եթէ հանդիպի բարեկիրթ մի աղջկայ, պիտի ամուսնանայ եւ վերադառնայ Կալիֆորնիա։ Այնտեղ այդի էլ ունի եւ տարին երկու հազար տոլարի խաղող է ծախում։ Կօշիկների մասին խօսելիս «ամէնքս էլ հայ ենք, ասում է, մէկ մէկի պիտի օգնենք»։

Նաեւ բամպակի հարցը լաւ ուսումնասիրած է, եթէ հայ կառավարութիւնը լայնօրէն վարձատրի.— «Մենք ամերիկացիները դրական մարդիկ ենք» — կարող ենք կարեւոր խորհուրդներ տալ։

Տարօրինակը այն է, որ սովետական պաշտօնեաները մեծ յարգանքով են նայում նրա վրայ, «պարոն պրոֆեսոր» են ասում եւ յանձնարարական նամակներ են տալիս։

Դրական մարդ է, չինարար։

Իմ վրաս նայում են, էնպէս, ներողամտութեամբ։ Բանաստեղծ մարդ է, աւելորդ բեռ, բայց, վերջապէս, պրոպագանդի տեսակէտով...

Մէկը, մինչեւ անդամ մութ դոյներով նկարագրեց երկրի տնտեսական դրութիւնը։ «Փող չունես, ո՞ւր ես գնում, ա՛յ մարդ»։

Պատմում են յեղափոխական արհաւիրքը։ Փախուստ կովկասեան լեռնաշղթայի վրայով։ Տուն ու տեղ քանդուած։

Վլադիկաւկասի փողոցներում հաւ են ծախել, ոտաբոբիկ մղոններ են անցել...

Չա՛ց, մի կտոր հաց եւ հանգստութիւն — այդ են ուզում։

Պրպտում եմ դիտակցութիւնների մէջ։ Կլիչէ դարձած նախադասութիւնների տակից, թշուառ եւ խորամանկ հայն է ցցւում առջեւս, աչքը տնկուած մէկի դրպանից վայր ընկած ոսկիի վրայ։ Հոգիները բացակայ են։ Գաղափարները՝ դիւղի կիսաքանդ, խանութի առարկայ։ Շրթունքների երկու կողմից խոր եւ բիրտ գծեր։ Աչքերի մէջ՝ քարացում։

Հայութիւնը նաւի վրայ օրօրւում է, մի տեսակ անդլուխ, նպատակից եւ դաղափարից դուրկ։ Մկանները թուլացած, կամքը անհետացած, ահաւոր մի սկլերոզ քամիներին անձնատուր։

Մարդկանց լքած են կեանքը եւ մահը։

Պարապ։

Ու դոց սովրած նախադասութիւնների շչնջոցը, մեռած տերեւների նման։

Մի՞թէ, մտածում եմ, այնտեղ եւս այսպէս է։ Ոչ տեսլութի՞ւն եւ ոչ սէ՞ր։ Մի՞թէ ոչինչը մեքենայացած է, պարապը քարացած։

Անկարելի է...

Այստեղ վախստականների մտայնութիւն է, իսկ ես գնում եմ նոր կեանքի նոր բովանդակութիւն փնտռելու։

* * *

Ալեկոծուած ծովի այս ալիքները աւելի կայուն են, աւելի մշտակայ քան արդի աշխարհը։ Ծովը բաղմած է հիանալի բնազդի վրայ։ Փոթորիկների դրաման տեղի է ունենում հաստատուն օրէնքների ճարտարագիտական, եւ դրեթէ բարոյական, մղումով։ Հրանքները, հեռաւոր երկիրներից եկող մրրիկները, արեւային ջերմութեան պատուտակի տակ, թուաբանական արժէքներ են՝ երկրագնդի հաւասարակշռութեան համար անհրաժեշտ։

Աշխարհը դիտակցութիւն է եւ տարերքային՝ իմաստ։

Ամէն ինչ թրթռում է եւ դգացողութիւն։ Երկիրների տակից՝ հեռաւոր աշխարհամասից՝ միւս աշխարհամաս՝ նուրբ ջղերի սիստեմներ կան, որոնք ջութակի թելերի նման դգայուն են։ Ովկիանոսի վրայ անցնող քամիները Սեւանայ լճին սարսուռներ են տալիս եւ բեւեռների վրայ պայթում։

Լուսինը ճգողական ուժ է, ոսկեցած մաղնիս, որի աչքերից լոյս են քաշում լեռների գագաթները եւ ծովերի ճակատի վրայ ծաղկող բոյսերը։

Ամէն ինչ կրակ է, աղամանդէ դունդ։

Ծովերը բարձրանում են, իջնում, կղզի-

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան